ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

Երևան-0010, Հանրապետության հր. Կառավարական տուն 3

"20" դեկտեմբերի 2024 թ.

N 300-Ա

ՀՐԱՄԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻՑ ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ԱՎՏՈԲՈՒՍԱՅԻՆ ԿԱՆՈՆԱՎՈՐ ՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈԽԱԴՐՈՂՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի դեկտեմբերի 27-ի «Հայաստանի Հանրապետության տարածքից ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների և ուղեբեռների միջպետական փոխադրումների իրականացման կարգը հաստատելու մասին» N 1587-Ն որոշման հավելվածի 17-րդ կետի 9-րդ ենթակետի, Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 659-Լ որոշման հավելվածի 19-րդ կետի 20-րդ ենթակետի պահանջներով և հիմք ընդունելով 2024 թվականի փետրվարի 9-ին կայացած Հայաստանի Հանրապետության տարածքից միջպետական ավտոբուսային կանոնավոր փոխադրումներ իրականացնող Հայաստանի Հանրապետության փոխադրողների ընտրության մրցութային հանձնաժողովի գնահատման ամփոփ-թերթիկը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության տարածքից միջպետական ավտոբուսային կանոնավոր ուղևորափոխադրումներ իրականացնող Հայաստանի Հանրապետության փոխադրողների ընտրության 2024 թվականի փետրվարի 9-ին կայացած մրցույթի արդյունքները՝ ըստ գնահատման ամփոփ-թերթիկի:

2. «Երևան-Բագրատաշեն-Մարնեուլի» միջպետական երթուղու սպասարկման համար 64 ընդհանուր միավորով, որպես հայկական փոխադրող, հաղթող ճանաչել

«Երկու Ընկեր» ՍՊ ընկերությանը՝ «Մերսեդես Բենց» մակնիշի 553 AA 55, 553 NN 55, հաշվառման համարանիշի տրանսպորտային միջոցներով՝ սահմանելով սպասարկման երեք տարի ժամկետ, մեկ ուղևորի համար 4500 դրամ փոխադրավարձով:

3. «Երևան-Ուրմիա» միջպետական երթուղու սպասարկման համար 50 ընդհանուր միավորով, որպես հայկական փոխադրող, հաղթող ճանաչել «Գոլդենթրի» ՍՊ ընկերությանը՝ «Մետրա» մակնիշի 108 MM 01 հաշվառման համարանիշի և «Մերսեդես-Բենց» մակնիշի 556 DD 55, 01 NN 108 հաշվառման համարանիշի տրանսպորտային միջոցներով՝ սահմանելով սպասարկման երեք տարի ժամկետ, մեկ ուղևորի համար 15000 դրամ փոխադրավարձով:

4.«Երևան-Թեհրան» միջպետական երթուղու սպասարկման համար 58 ընդհանուր միավորով, որպես հայկական փոխադրող, հաղթող ճանաչել «Արթա Թրավել» ՍՊ ընկերությանը՝ «Նեոպլան» մակնիշի 80 NH 808, 56 OQ 555 և 56GD 555 հաշվառման համարանիշի տրանսպորտային միջոցներով՝ սահմանելով սպասարկման երեք տարի ժամկետ, մեկ ուղևորի համար 18000 դրամ փոխադրավարձով:

5. Սույն հրամանի կատարման նկատմամբ հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ Արմեն Սիմոնյանին:

2/20/2024

X

ԳՆԵԼ ՍԱՆՈՍՅԱՆ

ՆԱԽԱՐԱՐ՝ Signed by: SANOSYAN GNEL 1710830069 **Գ. ՍԱՆՈՍՅԱՆ**

ք.Երևան